

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՍՏՐԱՏ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

5 ՓԵՏՐՎԱՐԻ, 1952 Թ.

ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՆ

Խորին վշտով կարդացինք մեր սիրելի բարեկամի՝ նորին Սրբություն Համայն Վրաստանի Պատրիարք—Կաթողիկոս Կալիստրատի մահագույժը:

Երանելի հանգուցյալը՝ հեզահամբույր բնավորության, կորովի մտքի, ժողովրդասեր սրտի, մարդասեր ոգու և հավատով լի՝ տիպար հոգևորական էր, որի հետևանքով և աշխարհի խաղաղության համար պայքարող բարի և ձեռնեռեց դեմքերից մեկն եղավ:

Մեր վշտին վշտակից է նաև հայ հոգևորականությունն ու հայ հավատացյալ ժողովուրդը, որոնք հայտնում են իրենց հարգած ու սիրած երանելի հանգուցյալի մահվան առթիվ, հոգևոր եղբայրներին ու եղբայրակից վրաց ժողովրդին՝ իրենց վիշտն ու ցավակցությունը:

Մաղթենք Ամենակալին, որ նա հարուցանե հար և նման արժանավոր հաջորդ ի պայծառություն Վրաց Եկեղեցու, ի մխիթարություն վրաց ժողովրդի՝ և պահպանե ու ամրապնդե երկու ժողովուրդների եղբայրական հարաբերությունը, որոնք պատմականորեն անխզելի կապված են միմյանց հետ:

Հիշատակն արդարոյն օրհնյալ եղիցի:

Հայ Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի զգացմունքների թարգման կհանդիսանա Հայ Եկեղեցու պատգամավորությունը:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ—ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՍՏՐԱՏԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՀԵՌԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սրբազնագույն Տե՛ր.

Հանգուցյալ Կաթողիկոս—Պատրիարք Կալիստրատի գերեզմանի մոտ ազգողները առանձին խանդաղատանքով լսեցին Ձերդ Սրբության խորը զգայուն և մխիթարական խոսքերը, որի համար Վրաց եկեղեցու որդիները խորին շնորհակալություն են հայտնում Ձերդ Վեհափառությանը:

Վրացական Պատրիարքական Աթոռի տեղապահ՝
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՂԲՈՒՄ Է ՄԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՌՈՒԲԵՆ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՐԱՄԲՅԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՀԵՌԱԳԻՐԸ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՌՈՒԲԵՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Մենք և սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհուրդը, խորը վշտով համակված, հաղորդում ենք Միաբանությունից հարգված և հավատացյալ ժողովրդից սիրված Գերագույն Հոգևոր խորհրդի կարևորագույն անդամ գերաշնորհ Տ. Ռուբեն Արքեպիսկոպոս Դրամբյանի անակնկալ մահը, որ տեղի ունեցավ հունվարի քսանութին ժամը քսաներեքին: Հարգենք հանգուցյալի հիշատակը Սուրբ Պատարագի մատուցմամբ և հոգեհանգստի կատարմամբ, և մաղթենք Բարձրյալին՝ շնորհել արժանի հաջորդ, նվիրված սպասավոր եկեղեցու և մխիթարիչ ժողովրդին:

ԳԵՈՐԳ Զ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈԳԵԼՈՒՅՍ ՍՐԲԱԶԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Խորապես վշտացած ենք արքեպիսկոպոս Դրամբյանի մահվան առթիվ: Երեկ մատուցել ենք հանդիսավոր պատարագ: Իմ և համայնքի կողմից հայտնում եմ ցավակցություն: Տերը պահպանե Հայոց Եկեղեցուն:

Իմ առողջությունը լավանում է:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կ. ՊՈԼՍԻՑ

Դրամբյան սրբազանի անակնկալ մահը բոլորիս սիրտերը համակեց խոր վշտով: Աստված լուսավորե նորա հոգին և մխիթարե Ս. Օծությունդ, Գերագույն Հոգևոր Խորհուրդն և միաբանությունը, պարգևելով արևշատություն քաջողջությամբ: Պատշաճ հարգանքը կընծայվի հանգուցյալի հիշատակին:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Մեր և համայնքի կողմից հայտնում ենք Ձերդ Վեհափառության՝ գերապատիվ Արքեպիսկոպոս Դրամբյանի մահվան առթիվ մեր խորին ցավակցությունները: Այս կիրակի կմատուցվի հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Թեհրանի հայոց թեմական խորհուրդը, եկեղեցական վարչությունը և քահանայից դասը խորը վշտով համակված, հայտնում են իրենց ցավակցությունը թեմիս նախկին առաջնորդ և Գերագույն Խորհրդի անդամ Ռուբեն Դրամբյանի ցավալի մահվան առթիվ: Հարգում ենք հանգուցյալի հիշատակը սուրբ պատարագի մատուցմամբ և հոգեհանգիստի կատարմամբ թեմիս եկեղեցիներում:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՓԱՐԻԶԻՑ

Խորապես վշտացած ենք Հայոց եկեղեցու ստացած անգութ սգով: Հայտնում ենք Ձեզ խորին ցավակցություն գերապատիվ Ռուբեն Դրամբյանի մահվան առթիվ: Հանգուցյալի հիշատակին կմատուցենք հանդիսավոր պատարագ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Մեծ վշտով ստացանք Ռուբեն արքեպիսկոպոսի վախճանման լուրը, որ հարգված ու սիրված էր նաև մեր կողմից: Խնդրում ենք ընդունել Ռումինահայ թեմի ցավակցությունները: Նրա հիշատակը օրհնությամբ եղիցի:

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹԵՀՐԱՆԻՑ

Անհուն վշտով իմացա մեր սիրելի Ռուբեն Արքեպիսկոպոսի մահը: Աղոթում եմ առ Աստված նրա հոգու փրկության համար: Ցավակցություններս Գերագույն Հոգևոր Խորհրդին:

ՌՈՄԱՆՈՍ ԻՍԱՅԵՎ

ԿԱԶՎԻՆԻՑ

Դրամբյանի մահվան առթիվ մատուցանել ենք հոգեհանգիստ: Հայտնում ենք մեր վիշտը Վեհափառին:

ԿԱԶՎԻՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Վեհափա՛ռ Տեր.

Մահվան գաղափարը և սիրելիի մը, արժեքավոր անձի մը կորուստին վրա տխրիլը և սգալը մարդկային ըլլալով, կարելի չէ խուսափիլ անոր ճնշող ազդեցութենեն:

Անոր համար խոր վիշտ պատճառած է Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ տեր Ռուբեն սրբազան արքեպիսկոպոս Դրամբյանի մահը ինչպես Վեհափառությանդ, Մայր Աթոռի միաբանության, այնպես ալ ինձ և մեր կեդրոնական վարչության վրա, ևս առավել անոր իմ օծակից հոգևոր եղբայրն ըլլալու հանգամանքով:

Վեհափառությանդ հրահանգին համաձայն հանձնարարած ենք մեր եկեղեցիներուն հատուկ սուրբ պատարագի մատուցմամբ և հոգեհանգստյան պաշտամունքով հարգել նորա հիշատակը:

Աստված հաստատ և անսասան պահե Եկեղեցին Հայաստանյայց, անդարձ մեկնողներու տեղ արժանավոր հաջորդներ տալով Անոր:

Որդիական խոնարհ հարգանքներով մատչելով ի համբույր Ս. Աջույդ՝

Առաջնորդական տեղապահ Գալիֆորնիա՝
ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կ. ՊՈԼՍԻՑ

Ամենախորունկ թախիծով լսեցի վախճանման տխրագին լուրը Մայր Աթոռ հեղինակավոր միաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդ կարևորագույն անդամ և նվաստիս օծակից եղբայր՝ գերաշնորհ տեր Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանի, որուն անակնկալ մահը մեծ հարված է Հայաստանյայց Եկեղեցվո, լինելով անժխտելիորեն աջ բազուկը Ձերդ Վեհափառության, իր հմտական պաշարով, իր մտավորական արժանիքներով և մանավանդ իր հայրենասիրական զգացումներով ու նշմարիտ կրոնավորի վայել հեզահամբույր խառնվածքով: Տասներկու անդրանիկ Ձեր ձեռնադրություններուն շրջանը՝ հավիտենականության անցան, խոր պարապ մը թողլով հայ հոգևորական անդաստանին մեջ:

Սույն տխուր առթիվ, Վեհափա՛ռ Տեր, կխնդրեմ որ բարեհաճիք ընդունիլ որդիական անկեղծ սիրո ցավակցություններս:

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Կեդրոնական վարչական խորհուրդս, ստանալով Ձեր Սրբազնության հեռագիրը, խոր վշտով համակվեցանք, տեղեկանալով որ վաղաժամորեն կորսնցուցած ենք Ս. Աթոռի եռանդուն ախոյանները և հայ եկեղեցական ընտրանիին գերաշնորհ տեր Ռուբեն Արքեպիսկոպոս Դրամբյանը:

Համաձայն Ձերդ Վեհափառության հրահանգին, փետրվար 17-ի կիրակին, Բաղաքիս առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցվո մեջ հանդիսավոր սուրբ պատարագ և հոգեհանգստյան պաշտոն պիտի կատարվի հանգուցյալ սրբազանի հոգվույն և ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդյան:

ՍԱՐԱՖՅԱՆ — Ատենագրիր

Ա. ՍԿԵՐԿԱՄԱԼԻ — Ատենապետ

Յավակցական հեռագրեր են ստացված նաև Մայր Հայրենիքի թեմական բոլոր խորհուրդներից, ինչպես նաև Լուսանոգի Ռուբեն Արքեպիսկոպոսին ծանոր ու հարգող մի շարք եկեղեցականներից և ազգայիններից: